տէ՝ ուր որ դառնաս՝ շնչարգել պիտի լինիս՝ հարկ է քեզ բերանդ թաշկինակ մի կապել՝ քառորդ ժամ տեղդ մնալ։

1880 թուականն էր և յունվարի մէջ. առաջին անգամն էր՝ որ Ալաշկերտի խիստ ձմրան դէմ կը մարտնչէի՝ շատ անգամ չերմաչափս ներս՝ դուրս կը տանէի և կը բերէի՝ որով կը ցանկայի մի հնար գտնել՝ ծանրածանր սառնամանիքը բառնալ՝ սովեալ ժողովրդեան մխիթարութիւն՝ մի յոյս գտնել՝ սակայն այդ ըմբոստ և անսանձ ձմրան ով կը համարձակէր մի բան անել՝ նա աւելի և աւելի սաստկացոյց իւր սառնամանիք. չերմաչափը որ Դեկտեմբերի վերջերն զրօից 8° խոնարհ էր՝ այժմ 16°—18° խոնարհած էր։ Արդ մարտնչելէ յոյսս կտրած՝ քաշուեցայ ներս՝ վերմակս քաշեցի գլխուս՝ որոյ ներքև պատսպարուեցայ։

Բուքը դուրսը թող ձեան խաւն իրար խառնէ աստի անդ՝ այն տեղէն մի ուրիշ վայր կուտակէ. իսկ դու տունդ ես՝ եթէ երդիկդ թղթած չես՝ տեսար որ ձեան փոշին սողալով ներս թափանցեց. եթէ թղթած ես՝ շչալով մի այլ ծակ կորոնէ՝ եթէ գտաւ ասելի ծակ անգամ՝ այդ տեղ վզվզոցը կը դնէ՝ կը սողայ ներս արագօրէն։

Այս սարսափելի բքին ամեն մարդ մոռացած է դրացու տուն գնալ՝ խօսակցութեամբ պարապիլ և կամ իւր տունը նստելով ընտանեաց հետ զուարճանալ՝ այլ իւր ուշադրութիւնը դարձուցած է բքի այլևայլ եղանակաւ հանած սուլումներուն՝ «Անտուած՝ կասէ՝ դու ազատ էնիս՝ չեղնի իտա՝ բքուն մարդ ու մուրդ եղնի դուռը։»

Այսօր մնացինք տունը՝ մեր համբերութիւնը հատած է՝ դուռը անգամ չենք կարող բանալ՝ մի անգամ տեսնել թէ ինչ կայ դուրսը։ Բանտարկուած ենք ներսն՝ երդիկն ևս չուանով քաշած՝ գոցած՝ մթի մէջ լուռ ու մունջ նստած ենք՝ մանր երեխայք տան ներսի դռնից շարունակ անասնոց գոմը կը վազէին՝ այն տաք տեղն երեխայական խաղերով կը պարապէին՝ նոքա ևս այս օր լուռ ու մունջ նստած են՝ ձէն ծպտուն չը բարձրանայր։

Ցերեկն անցուցինք՝ գիշերն քնանք՝ սակայն մեր ականջն